Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 8

Ք. Երևան, 23 հուլիսի 2021 թվական

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) էլեկտրոնային քվեարկության ներկայացված հարցերի վերաբերյալ

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցում են՝

Վ. Քերոբյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատար (Խորհրդի նախագահ)

Ա. Ասոյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար (Խորհրդի անդամ)

Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Ք. Գրիգորյան – ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Տ. Գաբրիելյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Լ. Նանուշյան – ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ (Խորհրդի անդամ)

Բ. Պիպոյան - «Իրազեկ և պաշտպանված սպառող» հասարակական կազմակերպության ղեկավար (Խորհրդի անդամ)

Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող (Խորհրդի անդամ)

Մ. Բեգլարյան – ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնի փորձագիտական խմբի ղեկավար (Խորհրդի անդամ)

1. Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի բյուջետային հայտի նախագծին հավանություն տալու մասին

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2021 թվականի հուլիսի 23-ի նիստի օրակարգային հարցի վերաբերյալ անդամները ներկայացրել են հետևյալ դիրքորոշումները՝

➢ **Արման Պողոսյան** . ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի էլեկտրոնային քվեարկության օրակարգում ներկայացված բյուջետային հայտի նախագծի վերաբերյալ, հայտնում ենք, որ այն չի համապատասխանում ՀՀ 2022-2024թթ. ՄԺԾԾ և 2022թ. բյուջեի նախագծի նախնական տարբերակին, որը հաստատվել է ՀՀ կառավարության 12.07.2021թ. N 1171-Ն որոշմամբ:

Այսպես, վերոհիշյալ որոշմամբ հաստատված 2022-2024 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով, որը ներառում է նաև 2022թ. պետական բյուջեի նախագծի նախնական տարբերակը, 1213 ծրագրի 11007՝ Սննդամթերքի անվտանգության բնագավառում վերահսկողության իրականացման ծառայություններ (պահպանման ծախսեր) միջոցառման գծով 2022թ. համար նախատեսվել է 1,386,867.2 հազար դրամ:

Հայտի նախագծը ներկայացվել է նույնությամբ գրեթե 2022-2024թթ. ՄԺԾԾ հայտի չափով, ընդամենը 1,652,296.9 հազար դրամի սահմաններում, որից պահպանման ընթացիկ ծախսերի գծով՝ 1,613,484.9 հազար դրամ և կապիտալ ծախսերի գծով՝ 38,812.0 հազար դրամ, որը ընթացիկ ծախսերի մասով ավելի է 2022թ. համար նախնական տարբերակից շուրջ 226,617.7 մլն դրամով:

Ներկայացված 2022թ. բյուջետային հայտի նախագծի վերաբերյալ, որով ներկայացված գումարը գերազանցում է ՀՀ կառավարության 12.07.2021թ. N 1171-Ն որոշմամբ հատատված 2022թ. բյուջեի նախնական տարբերակը՝ առանց դրա համար համապատասխան իրավական հիմքերի առկայության, հայտնում ենք հետևյալը՝

ՀՀ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի մոտ 2021 թվականի հունիսի 30-ին ժամը 10:00-ին կայացած՝ ՀՀ պետական բյուջեի կատարողականի, ընթացիկ իրավիճակի, 2022 թվականի ՀՀ պետական բյուջեի նախագծի կազմման և առաջիկա հարկաբյուջետային բարեփոխումների մասին խորհրդակցության N Վ/54-2021 արձանագրության 6-րդ կետի պահանջի համաձայն՝ առաջիկա ժամանակահատվածում անհրաժեշտ է խուսափել ընթացիկ ծախսերի ծավալի մեծացմանը հանգեցնող պարտավորություններ ստանձնելուց և դրա հնարավորությանն անդրադառնալ միայն տնտեսական աճի առաջանցիկ տեմպեր գրանցելու դեպքում:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով 2022-2024 թվականների պետական միջնաժամկետ ծրագրի նախագծի մշակման հիմքում դրված մակրոտնտեսական ցուցանիշները, առաջարկում ենք ձեռնպահ մնալ իրավական այնպիսի նոր կարգավորումներ կամ եղած կարգավորումներում այնպիսի փոփոխություններ առաջարկելուց, որոնք հանգեցնում են պետական բյուջեի ընթացիկ ծախսերի մասով պարտավորությունների ավելացմանը:

Ուստի, առաջարկում ենք 2022թ. բյուջետային ֆինանսավորման հայտի նախագիծը համապատասխանեցնել ՀՀ կառավարության 12.07.2021թ. N 1171-Ն որոշմամբ հատատված 2022թ. բյուջեի նախնական տարբերակին:

Ընդ որում, 2022թ. պետական բյուջեի նախագծի նախնական տարբերակի ցուցանիշից տարբերվող հայտ կարող է ներկայացվել միայն ուժի մեջ մտած այնպիսի

իրավական ակտի առկայության դեպքում, որը հանգեցնում է պահպանման ծախսերի ավելացման:

- **Նախագահ.** ՄԺԾԾ հաստատված տարբերակը պայմանական է ընդունվել, և դրա վերջնական տարբերակը պետք է համահունչ լինի Կառավարության ծրագրին, որը դեռ մշակման փուլում է: Ասածիս իմաստն այն է, որ ՄԺԾԾ-ն պետք է բխի Կառավարության ծրագրից, իսկ Կառավարության Ծրագիրն էլ պետք է արտացոլի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ծրագիրը և, ՍԱՏՄ մասով՝ մեր կառավարման խորհրդի տեսլականն ու պլանները՝ այս հույժ կարևոր կառույցը զարգացնելու ու մարդկանց կյանքի որակում էական դրական փոփոխություն մտցնելու համար:

- **Արթուր Ասոյան.** Կիսում եմ պարոն Քերոբյանի կարծիքը և գտնում եմ, որ այս փուլում ծախսերի կրճատումը հանգեցնելու է մարմնի բնականոն գործնեության խաթարման, որի արդյունքում այս ոլորտում կարող ենք ունենալ նաև անվտանգային խնդիրներ:

Միաժամանակ, խնդրում եմ պարոն Ավետիսյանին խորհրդի անդամներին տրամադրել տեղեկանք՝ նախատեսված ֆինանսավորման կրճատման հետևանքների մասին:

- **Մելինե Բեգլարյան.** Կիսում եմ բյուջետային հայտի նախագծի վերաբերյալ պարոն Քերոբյանի կարծիքը:
- **Բաբկեն Պիպոյան.** Առաջնորդվում եմ ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշմամբ:

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների 7 կողմ և 2 դեմ ձայներով որոշվեց՝

Հավանություն տալ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի բյուջետային հայտի նախագծին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ՔԵՐՈԲՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Է. ԲԱՍԵՆՑՅԱՆ